

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 12/11

Քաղ.Երևան

23 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. մարտի 23-ի նիստում (արձանագրություն N 3/1) քննարկեց «ՎԵՐՖԱՐ» ընկերության կողմից 2011թ. փետրվարի 12-ին ներկայացված «ՌՈՒՍԿԱՅԱ ՍԿԱՋԿԱ» (հայտի համարը՝ 20101243) բառային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, համաձայն որի, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների աշխարհագրական ծագման հարցերում: Տվյալ դեպքում նշանի հիմնական ընկալման բառային տարրը հանդիսանում է «ՌՈՒՍԿԱՅԱ ՍԿԱՋԿԱ» (ռուս.), «ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ» արտահայտությունը, որը մատնանշում է ապրանքի ծագումը, իբր ապրանքը ռուսական է, և սպառողին մոլորեցնում է ապրանքի իրական ծագման հարցում, քանի որ նշանի գրանցումը խնդրարկվել է հայկական ընկերության կողմից: Բացի այդ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան 30-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «ՍԿԱՋԿԱ» (ռուս.) և «ՀԵՔԻԱԹ» (Գրանդ քենդի) հայ-կանադական ՀՁ ԱՊԸ-ի, Եղվարդ, Մասիսի 31) N 15799, 8717, 7672 ավելի վաղ ապրանքային նշանների առկայության պատճառով: Տվյալ դեպքում գրանցված համակցված նշանների հիմնական «ՍԿԱՋԿԱ» (ռուս.) և «ՀԵՔԻԱԹ» բառը ներառված է հայտարկված բառային նշանի մեջ: Բացի այդ նշանները իմաստային նմանություն ունեն, որը որոշվում է նշանների տարրերից որևէ համընկնող տարրով, որն առանձին իմաստ ունի

և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը, տվյալ դեպքում դա «ՍԿԱԶԿԱ» (ռուս.) և «ՀԵՔԻԱԹ» բառերն են:

Բողոքում ներկայացված է, որ 2010թ. մայիսի 12-ին Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների բաժնի կողմից մերժվել է ապրանքային նշանի գրանցումը, և նշված է մերժման հիմքը:

Չհամաձայնելով որոշման հետ՝ 2010թ. հուլիսի 13-ին բողոքարկողը խնդրարկել է կրկնական փորձաքննություն, սակայն 2010թ. սեպտեմբերի 17-ին կրկին ստացել է հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշումը՝ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ:

Ստորև ներկայացնում ենք բողոքարկողի հիմնավորումները:

Բողոքարկողը գտնում է, որ մերժման հիմք հանդիսացող օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը այս դեպքում կիրառելի չէ, քանի որ «ՌՌԻՍԿԱՅԱ ՍԿԱԶԿԱ» (ռուս.), «ՌՌԻՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ» արտահայտությունը որևէ կերպ տեղանք չի մատնանշում: Բողոքարկողը գտնում է, որ մեկնաբանությունը տեղին կլիներ, եթե խոսքը վերաբերեր ենթադրենք «ՌՌԻՍԿԻ ՇՈԿՈԼԱԴ» (ռուս.) կամ "ՌՌԻՍԿԱՅԱ ՎԱԴԱ" (ռուս.) կամ նմանատիպ այլ դեպքերի համար, երբ «ՌՌԻՍԱԿԱՆ» բառի հետ գործածվի կոնկրետ ապրանքի նշում: Նշում է նաև, որ «ՀԵՔԻԱԹ» բառը որևէ կերպ չի կարող շփոթեցնել սպառողին:

Բողոքում նշված է, որ պետք է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ապրանքների պարագայում արտադրված ապրանքը սպառողին ներկայացվում է որոշակի փաթեթավորմամբ և մակնշմամբ, որի վրա նշվելու է արտադրող կազմակերպության անվանումը, հասցեն և այլ ռեկվիզիտներ, որոնք սպառողներին լիարժեք տեղեկատվություն կտան ապրանքի ծագման մասին:

Բողոքարկողը կարծում է, որ տեղին չէ այն անհանգստությունը, որ ենթադրենք այցելելով "ՌՌԻՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ" անունը կրող սրճարան, սպառողները կարող են շփոթել, թե իրենք այցելում են աշխարհագրորեն Հայաստանից դուրս գտնվող այլ տարածք:

Բողոքարկողը նշում է, որ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի "ա" ենթակետով մերժումը սխալ է, քանի որ «ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ՀՁ ՄՊԸ-ի անունով ավելի վաղ գրանցված ապրանքային նշանները կրում են «ՀԵՔԻԱԹ», «ՁՄԵՌԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ», «ԱՆԱՀԻՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ», «ՊՈՒՇԿԻՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐ» անվանումները, իսկ հայտատուի կողմից ներկայացված ապրանքային նշանը կրում է «ՌՌԻՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ»

անվանումը, ինչը բողոքարկողի կարծիքով էական տարբերիչ հանգամանք է, ուստի այն որևէ կերպ սպառողներին մոլորության մեջ գցելու պատճառ չի կարող հանդիսանալ:

Նշված է նաև, որ «ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ՀՁ ՍՊԸ-ի կողմից բողոքարկումը վերաբերում միայն 32-րդ դասի ապրանքների համար, իսկ բողոքարկողի հայտով ապրանքային նշանը ներկայացվել է գրանցման 28-րդ, 30-րդ, 32-րդ, 33-րդ, 41-րդ և 43-րդ դասերի համար:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. փետրվարի 17-ին «ՎԵՐՖԱՐ» ընկերության կողմից ներկայացվել է «ՌՌԻՍԿԱՅԱ ՍԿԱԶԿԱ» (հայտի համարը՝ 20101243) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Նշվեց, որ փորձաքննության բաժնի կողմից ապրանքային նշանի գրանցումը մերժվել է, հիմք ընդունելով օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, համաձայն որի, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների աշխարհագրական ծագման հարցում:

Դրանից բացի օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան 30-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «ՍԿԱԶԿԱ» (ռուս.) և «ՀԵՔԻԱԹ» (Գրանդ քենդի) հայկանադական ՀՁ ԱՊԸ-ի, Եղվարդ, Մասիսի 31) N 15799, 8717, 7672 ավելի վաղ ապրանքային նշանների առկայության պատճառով:

Նշվեց բողոքարկողի հիմնավորումները և բողոքի ուսումնասիրության արդյունքում կոլեգիայի այն կարծիքը, որ փորձաքննության բաժինը խիստ է մոտեցել հայտը մերժելով 28-րդ, 41-րդ, 43-րդ դասերի համար: Նշվեց նաև, որ կոլեգիան 30-րդ և 33-րդ դասի ապրանքների և 32-րդ դասի որոշ ապրանքների համար փորձաքննության բաժնի որոշման հետ համամիտ է, քանի որ «ՌՌԻՍԿԱՅԱ ՍԿԱԶԿԱ» (ռուս.), «ՌՌԻՍԿԱՆ ՀԵՔԻԱԹ» արտահայտությունը մատնանշում է ապրանքի ծագումը և սպառողին մոլորեցնում է ապրանքի իրական ծագման հարցում:

Բողոքարկողը առարկեց՝ նշելով բողոքում ամրագրված հիմնավորումները:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը մասնակիորեն և «ՎԵՐՖԱՐ» ընկերության բողոքը բավարարել մասնակիորեն՝ գրանցելով «ՌՌԻՍԿԱՅԱ ՍԿԱՋԿԱ» (հայտի համարը՝ 20101243) բառային ապրանքային նշանը հայտում նշված 28-րդ, 41-րդ, 43-րդ դասերի ապրանքատեսակների համար ամբողջությամբ և 32-րդ դասի համար հետևյալ ապրանքատեսակների համար՝

դաս 32. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ (բացառությամբ կվասի) և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան